

Փ Ո Ւ Ն Չ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարսյ է : — Պոլիս բաժանորդ բլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, գարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ բլլալով : — Գանուցման տողը 40 փարսյ է մէկ անդամի համար : — Երազրոս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ : ւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս Լուսաւորիչ եկեղեցւոց վարի գրանը կից Նոր Գրատունը :

Ս. Չ Գ Մ Յ Ի Ն

Նիկիոյս եպիսկոպոսի համար մեր քանի մը հրատարակութիւնները տալուին կեցած ըլլալով, կրենք որ Նիկիոյս եպիսկոպոսի թելադրութեամբ կամ թէ անոր փափաքանայը համաձայն իղնիսիտի մէջ հանրագիր մը ստորագրուերէ Արմաշու վանուց եւ Առաջնորդութեան միութիւնը իղնիսթելու նպատակաւ : Այս միութիւնը որուն ղգալի վնասները եւ վնասները փորձով անհնուած են, և սահմանադրապէս կազմուած կրօն. և թաղ. ժողովներով քննուած և լուծուած ինդիր մ'է, այս միութիւնը ի՞նչ զարմանալիքան, այժմ կրկին կ'ուզուի Նիկիոյս եպիսկոպոսի ծանր ամբաստանութեանց ենթարկեալ եղած միջոցին :

Իղնիսիտի վիճակին մէջ միայն իղնիսիտը կրնայ ասանկ միութիւն մ'ուղել. որովհետեւ այդ միութեանն իղնիսիտի քիչ շահ չէր ելներ, որոնց հաշիւները կեդրոնական վարչութեան հազարդուած են : Սակայն իղնիսիտի գիւղերը, ինչպէս Պոլիս և ուրիշ մերձակայ գաւառները, որ յԱրմաշ ուխ-

տի երթալու սովորութիւն ունին, և և նուէրներ կուտան, ասոնցմէ և ոչ մէկը կրնայ ներել որ յանուն Արմաշու վանուց տրուած նուէրը իղնիսիտի առաջնորդ արանին և հոն յաճախողներուն կոկորդն սպասուի :

Քանի որ Արմաշ իր մէջ ունի տըպարան, վարժարան, հանդէս՝ որ ազգօգուտ յօգուածներով կրկայի, և քնախր եկեղեցականներու. որոնք ըստ յութեան սէրն ու համակրութիւնը գրաւելու իրաւունքը կ'ունենայ. և կեզր. վարչութիւնը որ ըստ սահմանագրութեան հակող է բոլոր ազգային վանօրէից վրայ, չկրնար թողուլ որ Արմաշու վանքը իղնիսիտի կալուածը համարուի :

Խառն ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կարեւոր ինդրոյն վերայ. և կրկախքէինք որ անգի շտայ սցոպիսի անիրաւ պահանջմանց : Կը յիշեցնենք որ Մշոյ Ս. Կարապետի վանքն ալ այսպիսի պատճառներով առաջնորդ ակամ իղնիսիտութեանն զատուեցաւ : Կը փափաքէինք որ Սերաստիոյ Ս. Նշանու պէս ամենահարուստ վանք մը գտնէ Արմաշու հարիս ընէ մէ-

կին չափ զգին արդիւնք յուցրցած
ուայն. Մ. Նշան ալ օր մը կրնայ
Ընկողմը լլկար, եթէ Արմաշու պէս բաժ-
նուի առաջնորդութենէն, և Արմաշի
պէս ընտիր վանահայր մ'ունենայ:

Կը յիշենք որ Արմաշի բաժանման
խնդիրը ասկէ առաջ յուղուած ատեն,
Իգնիմիտէն դարձեալ չաա ընդ դիմու-
թիւններ եղան, սակայն երբ Պօլսոյ
ազգայնոց մէջ ալ սկսաւ տարութիւ-
նը սաստիկանալ, ան ատեն Արմաշը
ուղղակի կեդր. վարչութեան պա-
տասխանատու վիճակին մէջ դրուե-
ցաւ, որ արդի բաժանեալ վիճակն է:

Առ այժմ այսպիսի, եթէ հարկը-
լայ կիսօսինք դարձեալ:

— Երեկ կայսերական հրամանա-
դիր մը եկաւ Պատրիարքարան, որով
էիմացուի թէ օգոստ. Սուլթանը բա-
րեհաճեր է ազգային Հիւանդանոցի
համար մինչև հիմայ շտրհուած օրա-
կէ 5 78 շաա հասն մինև 200 շաաին
վերածել:

Պարտաւ որ եմք ազգային շտրհա-
կալութիւն մատուցանել կայսերական
բարեխնամ կառավարութեան այս
մեծ շտրհին համար. Եղնպէս դժ-
հունակութիւն յայտնել ամեն. Տե-
ղապահ Հօր և Խաան Ժողովոյ, որ ազ-
գասիրտար հաճեցան խնայունել Հի-
ւանդանոցի պէտքը և յիշեալ շտրհն
ընդունել:

— Վարդուեան կիժտուէք ազգային
արիշ լուրերու հրատարակութիւնը:

... Իմիացիր
Սօկէ քանի մ' ամիս յառաջ կե-
տարից Մ. կարապետի վանուց մէջ
աղքատ մանկատանց համար գիշերօ-
թիկ պղկոց մը մտասկարարելու նը-

սրատակաւ ամեն մէկ բաժինը կէս ար-
ծաթ Մէծիակոյէ միանգամ և կանխիկ
վճարելի ըլլալով, Ուսումնասիրաց ան-
ուամբ մայրաքաղաքիս մէջ ընկերու-
թեան մը բացուիլը արդէն ազգային
քանի մը օրագրաց միջոցաւ հրատա-
րակուած էր ի լուր ամենեցուն: Այս
անգամ բերկրութեամբ սրտի պատիւ
կհամարիմ ծանուցանել ամեն բարե-
սիրտ ազգայնոցս, որ նոյն ընկերու-
թիւնը ազգասիրաց կողմանէ բաւա-
կան ընդունելութիւն գտնելով հե-
տըզհետէ զարգայման և իր բարեկը-
պատակ դիտաւորութեան պսակուե-
լուն յոյսերը աւելնալով, նոյն ընկե-
րութեան վերաբերեալ ամեն դործե-
րը օրինաւոր կերպով կատարելու և
ապագային մէջ ապահովութեան
սակ պահելու համար ասկէ յառաջ
ընդհանուր Ժողովով բաժանորդաց
մէջէն սա հետևեալ երեք պատուա-
ւոր անձինքը Տեսուչ Ժողով անուամբ
ընտրուած էին, որք են կիւմիւշեան
Յովհաննէս աղա, կիւլպէնկեան Մ.
Սարգիս աղա, Մասախճեան Համբար-
ձում աղա:

Այս արդոյ և ազգասէր անձինք
իրենց բազմազգող և սուղ ժամանակ-
ներէն հայրենասիրական սղւալ մնու-
մ'ալ այս ընկերութեան համար զն-
հելով մինչև հիմայ քանիցս անգամ
նիսա ըրած և 19 յոգուած է բազկա-
ցեալ կանոնի ծրագիր մը պատրաստած
էին, զորն որ քանի մը շարաթի հետէ
բաժանորդաց ուշադրութեանը մա-
տուցանելով իր բաքանչիւրաց ստորա-
դրութեամբ գուերայնել տալէն ետ-
քը, այս օրերու ալ իրենց դիւանը բա-
ցած և շանասիրութիւնին շարունա-



կերով բաժանորդաց բութեան վրայ
 պէտք եղած աշխատութիւնը չինա-
 յիլա յանձնառու եղած ըլլալովին,
 կինդրուի ուրեմն ամեն բարեօրոյ
 և բարենախանձ ազգայիններէ, որ
 այսու հետեւ բարեհաճին իրենց յօժա-
 րակամ նուէրները վստահութեամբ և
 սպասով կերպով նայն բնկիրութեան
 կանոնին համեմատ շարհելու, և ա-
 պազ այլն մէջ ազգային աղքատ ման-
 կրանց յառաջադիմութեանը մաս-
 նակցեալ իրենց ձեռնառութեան
 նպատար չղանալու, և հետեւաբար
 պէտք եղած անդորրազ իրենն ստա-
 նալու. ուստի. . . խմբազ իր, մերներ-
 կաց ծանուցազ ըրին Չեր ազգ օղուտ
 օրաթերթէն անկիւն մը շարհելու բա-
 րեհաճելիւ ինդրեալ, մնամ, և այլն

Ի գիտնաց Ուս. Բնկ. Կեաարիոյ
 Ն. Յակոբ վարդ. Կեաարացի

ԽՍՈՆ ԼՈՒՐՆԵՐ

Լմաննի մէկ լրագիրը կրտէ թէ
 Թրանքօ—պէլճիդ սկան վեճին նկատ-
 մամբ եղած բանակցութիւնները ու-
 ընք խառն յանձնաժողովոյ մը պիտի
 ենթարկուի ելին, դեռ որչաւ ամ չեն :
 Գազդիոյ կառավարութիւնը կպահան-
 ջէ որ մանաւոր յանձնաժողով մը
 կազմուի որպէս զի քննէ գազդիացի
 բնկիրութեան շարհուած պատճառ-
 թեանց վաւերականութիւնը :

—Պերլինն լուր կուտան թէ Բը-
 րուսիոյ թագաւորը երկար ատեա-
 թիւն մը քրեր է վիճնադէն նոր գար-
 ձող Պ. վեյրթերի հետ, որ Պերլին
 դառնալու հրահան խնդրած ըլլալով
 մէյմ'ալ վիճնա չպիտի դառնայ :

—Պրուքտէլի Կնատրանտնա ԼԷ
 բազիրը կծանուցանէ թէ Պելճիդ պի-
 դ ազգիական գեադանը Լալայէթ մար-
 քիդին կողմանէ գիր մը մատուցեր է
 Պելճիդայի կառավարութեան, որով
 կառաջարկուի փարիզի մէջ գեադա-
 նաժողով մը կազմել այս խնդիրը լու-
 ծելու համար : Թէ այս և թէ ուրիշ
 առաջարկութեանց վրայ կխորհրդա-
 ծէ եղեր Պելճիդ պիդ պաշտօնէից մաս-
 նաւոր ժողով մը :

—Մատրիաէն լուր կուտան թէ
 Բրիտ զօրադէտը իմացուցեր է որ բա-
 ըր թագաւորականք միաբան են իշ-
 խանի մը թագաւոր քնարուելուն վը-
 րոյ. և պատեհ առ թիւ այս իշխանի
 անունը տալու պատրաստ է եղեր :
 Կորահաստատ ահամանազ բութիւնը
 կրօնից ազատութիւնը ճանչցած է,
 միայն թէ կորահանմէ որ ատելութեան
 կրօնքը պապականութիւնը ըլլայ :

—Փարիզէն լուր կուտան թէ քիշ-
 ատեննէն Թրանքօ—Պելճիդ գծաւ թիւնը
 գօհացուցի կերպով կլերջանայ : կրո-
 ուի ալ թէ Մարգիւր կառավարութիւ-
 նը խորհուրդ տուած է Պելճիդայի ուր
 այս գծաւ թիւնը խաղաղութեանը
 վերջացունել ջանայ :

—Մայեալ կիւրակէ գիշեր ժամը
 7ին ատենները Պէյօղլու Պիւլիօր
 անրէ գիշ'րապահն յոյնի մը տան ա-
 ջեւէն անցած ատենը, ճարձապիւն կը
 լսելով և համեալով թէ տունը վը-
 չելու մօտ է, շուտով յայտնելէ տա-
 նը մէջ եզոյննաւն. արդարեւ անաչ
 արտարնօք դաբա երկուուն վրայ, շատ
 ժամանակ չանցիկը, մէյմ'ալ նայիս
 տանը վըրէ ատանց մէկուն վըրէ
 տալու :

—Ամերիկայի մէջ նոր տեսակ կազմի գանուերէ, որ խիստ լուսաւոր անկրաս և գինն ալ աժան է եղեր :

—Լա Լիպերթէ գաղղիական լրատագիրը հետեւեալը հրատարակած է Լամարթիինի վրայ :

« 1869 յետար . 28ին կիրակէ օրը խորհրդածո-նիւնէ բանաստեղծական , ժողովին , պարծո-նիւն Փէրժոնիէնի ըսուած երկասիրութեանց հեղինակը , երեւելի բանաստեղծը , երեւելի պատմագէտը , երեւելի առնախօսը , 1848ի արտաքին գործոց պաշտօնեայն այսինքն Լամարթիին կընքեց իւր մահկանացու կեանքը :

Արփօն—Մարի—Լուի—ալ Բրաթ ալ Լամարթիին ծնած է 1790 հոկա . 21ին : Իւր քանի մը երկասիրութեանց մէջ պատանկութեան տարիներուն վրայ գրած է : 1820ին բանաստեղծ անունը շահեցաւ , երբ խորհրդածո-նիւնէ ըսուած երկասիրութիւնը իրոյս ընծայուեցաւ : Այս գիրքը յեղափոխութեան մը վրայ էր : Լամարթիին ստանաւ որ գրութեանց մասին կատարելագործած էր ինչ որ Շաթօպրիան արձակ գրութեանց մասին ըրած էր : Այս օրուան օրս անոր քանի մը երկասիրութիւնը կիսայեցնեն այն ճաշակը որ մինչեւ այն ատենը անձանօթ էր գաղղիական գրականութեան : Քիչ օրուան մէջ Լամարթիին անունը հռչակուեցաւ . այս անունը կրող անձը կարծես թէ Փարիզէն ծածկուիլ կուզէր : Քաղաքական պաշտօն ընդունելով Նարբոլի գնաց իրրեւ քարատուղար նոյն քաղաքին գաղղիական գեապանատան : Բայց այս պաշտօնը իր բանաստեղծական հանճարը մտցնել չտուաւ : Զի իրարու ետեւէ իսկ մը երկասիրութիւններ ունեցաւ , որոնք իւր համբաւը աւելցուցին և Գաղղիոյ ձեւարանին անդամակցութեան պատուոյն արժանի ըրին : 1830ին յեղափոխութիւնը սոյն բանաստեղծին նոր ստղծելի մը բացաւ : Քր-

րագիտական դափնիները բաւական չէին . պէտք էր նաեւ պատգամաւորաց խորհրդարանին ազմկալից վիճերուն մէջ առննարանել : Առաջին անգամ ընտրուող այս ջիւ չյաջողեցաւ : Բայց իւր դեպք Արթուր Գանապարհորդո-նիւնէն ետքը Պուրպօնեանց պալատը զրկուեցաւ Տէժնքէրքի ընդդրոյն նկատմամբ :

Գաղղիոյ մէջ չկայ մէկը որ կարենայ մտնալ , ինչ քաղաքական ստղծելիք ունեցաւ : Իւր նոր երկասիրութիւններն անգամ առննախօսի փառքին առջեւ տնեքեցիկ կըլլան , սրով ո՛չ խորհրդարանին մասնակից եղաւ , այլ եւ ամէն մարդ զինքը կուզէր մտիկ ընել : Այս առանձնակիցութեան մէջ Լամարթիին ընկերական եւ յառաջադիմական մասածուները եւս առուել կշատնար եւ վախճանը կառնէր Ժիրօնակններուն պատմութեանը եւ 1848ին յեղափոխութեանը : Հոս քիչ մը կանգ առնենք : Լուի—Ֆիլիպին անկուսն երեք ամիս ետքը Լամարթիին վիճակի ճշմարիտ թաղաւոր մը եղաւ . այնպիսի թաղաւոր մը , որ բանաստեղծութեան եւ ճաշատարախօսութեան փառքով ստացաւ Անկէց ետքը սկսան դժուարին աշխատութիւններ , ստակալի բանակցիւ մը զոր հազիւ կհամարձակիմք յիշատակել :

Ինչպէս որ այս բանաստեղծին ծնունդեանը վրայ խօսելնէս անմիջապէս ետքը խորհրդածո-նիւնէ ըսուած երկասիրութեանը անցանք , այնպէս ալ անոր վերջին փառաւոր թուականէն ետքն ալ 1869 յետար . 28 աղատարար թուականը գրեւորաջարտութիւնը կուներանք :

Փօլիս Չաղմաղ ճըրոյր—Եօղու շուջլումպուլլի խանին տակ Պ. Գալիպիեանի գրատունը ամեն տեսակ գրքեր աժան գնով կձախտին :

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՆՐԲՅԱՆ